ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2017թ. N------ Ն

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2012 դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» N561-Ն որոշման ամբողջ տեքստում «տուրք» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «վճար» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով:

2. Երևան քաղաքի ավագանու 2012 դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը սահմանելու մասին» N562-Ն որոշման նախաբանում և որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետում «տուրքի» բառը փոխարինել «վճարի» բառով:

3. Երևան քաղաքի ավագանու 2012 դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» N563-Ն որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին կետում և որոշմամբ հաստատված հավելվածի ամբողջ տեքստում «տուրք» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «վճար» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով:

4. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N93-Ն որոշման նախաբանում և որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի 6-րդ ենթակետում ու 7-րդ կետի 2-րդ ենթակետում «տուրքի» բառը փոխարինել «վճարի» բառով:

5. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի «Ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնություն սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N561-Ն և դեկտեմբերի 25-ի N563-Ն որոշումներում լրացումներ, 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N89-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 190-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում «տուրքի» բառը փոխարինել «վճարի» բառով.

2) որոշման 1-ին կետում «նշված տուրքը վճարելով Երևանի քաղաքային համայնքի բյուջեից» բառերը փոխարինել «ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից» բառերով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն թվականի հունվարի 9-ից ուժի մեջ են մտել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելուն մասին» և «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքները, ըստ որոնց՝ ավտոտրանսպորտային միջոցների ավտոկայանատեղերի համար սահմանված պարտադիր գանձույթ հանդիսացող տեղական տուրքը փոխարինվել է տեղական վճարով: Այդ փոփոխությամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել նաև Երևան քաղաքի ավագանու կողմից ընդունված Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման հետ կապված իրավահարաբերություններ կարգավորող մի շարք նորմատիվ իրավական ակտերում:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ